

# «ՀԱՅԵՐԸ ԵՒ ԵՐՈՒՍԱՂԷՄԸ»

«Կիւլյալէնկեան» Հիմնարկի Հայկական Համայնքներու բաժանմունքը կը վերահաստատէ սաղիմահայութեան խոր անցեալը



28 ՅՈՒՆԻՍ 2024 ՈՒՐԱԹ

## «ՀԱՅԵՐԸ ԵՒ ԵՐՈՒՍԱՂԷՄԸ»

Լիզպոնի «Գալուստ Կիւլյալէնկեան» Հիմնարկի Հայկական Համայնքներու բաժանմունքը ներկայիս հանդէս կու գայ շատ կարեւոր նախաձեռնութիւնով մը: Այսպէս, Լիզպոնի մէջ կազմակերպուած է շահեկան ցուցահանդէս մը, որ կը կոչուի «Հայերը եւ Երուսաղէմը»: Գեղարուեստականն ու գիտականը շատ կատարեալ ու նպատակասլաց ձեւով համատեղուած են այս նախագծի պարագային: Արդարեւ, ցուցահանդէսը պատմական անգնահատելի հաստատումներով հիւսուած է ու կը վերահաստատէ սաղիմահայութեան խոր անցեալը եւ նախընթացները: Փորձուգալէն Սուրբ Քաղաքի վրայ բացուած այս պատուհանէն անուրանալի ճշմարտութիւններու լոյսը կը ճառագայթէ ամբողջ աշխարհին համար՝ մինչ Հայ Երուսաղէմը կը դիմագրուէ գոյարանական լրջագոյն մարտահրաւէրներ:

2023 թուականին Փարիզի մէջ ի յայտ եկած Երուսաղէմի «Կիւլյալէնկեան» մատենդարանի կառուցման վերաբերեալ արխիւները մեկնակէտը եղած են այս ցուցահանդէսին, որ կ'անդրադառնայ Հայերու եւ Երուսաղէմի սերտ կապին, ինչպէս նաեւ ազգային երախտաշատ բարերար Հոգեւոյս Գալուստ Սարգիս Կիւլյալէնկեանի Սուրբ Քաղաքի հետ անձնական կապին: «Կիւլյալէնկեան» Հիմնարկի Հայկական Համայնքներու բաժանմունքի եւ «Կիւլյալէնկեան» արուեստի գրադարանի եւ արխիւի համատեղ ջանքերով կազմակերպուած է սոյն ցուցահանդէսը, որ կը ներկայացնէ սփիւռքի առաջին եւ ամենահին Հայկական Համայնքին Հազարամեայ պատմութիւնը: Երուսաղէմի Հայկական թաղամասը Հին քաղաքի չորս թաղամասերէն մին է՝ անզուգական կրօնական եւ մշակութային ժառանգութեամբ:

Ցուցահանդէսին գծով ներկայացուած են նորայայտ փաստաթուղթերու ընտրանի մը՝ Կիւլյալէնկեանի եւ իրեն ժամանակի նախկին պատրիարքներու նամակագրութեանց, եկեղեցական կամ կրօնական իրեր, Երուսաղէմէն փոխառնուած հազուադիւտ եւ եզակի յախճապակեայ կտորներ, ինչպէս նաեւ Երուսաղէմի Հայոց Պատրիարքութեանէն փոխառնուած Սրբոց Յակոբեանց Մայր տաճարի՝ Սուրբ Գլխադրի մատրան 18-րդ դարու ասեղնագործ վարագոյր մը նախիջեւանէն: Այս վերջինը Լիզպոնի փոխադրեց Երուսաղէմի Հայոց Պատրիարքութեան «Էլէն եւ Էտուարտ Մարտիկեան» թանգարանի տեսուչ Տ. Արշակ Արեղայ Ղազարեան, որ եւս ներկայ էր ցուցահանդէսի բացման արարողութեան: Հայկական Համայնքներու բաժանմունքի տնօրէն տքթ. Ռազմիկ Փանոսեան եւ ամբողջ անձնակազմը շնորհ վերաբերմունք ցոյց տուին թէ՛ անոր եւ թէ՛ բոլոր մասնակիցներուն նկատմամբ:

Հոգեւոյս Գալուստ Սարգիս Կիւլյալէնկեան մշտապէս ամուր Հոգեւոր կապի մէջ եղած էր Սուրբ Քաղաքին եւ Հայ Երուսաղէմին հետ: Ան զգալի բարեգործական ծրագրեր իրականացուցած էր Սուրբ Աթոռէն ներս՝ ներառեալ իր նուիրատուութեամբ կառուցուած էր «Կիւլյալէնկեան» մատենադարանը, որ ձօնուած է ազգային բարերարի բարեխիշատակ ծնողներուն՝ Սարգիս եւ Տիրուհի Կիւլյալէնկեաններու յիշատակին: «Կիւլյալէնկեան» Հիմնարկը ցայսօր հաւատարիմ կը մնայ իր Հիմնադրի աւանդին՝ աջակցելով Երուսաղէմի «Կիւլյալէնկեան» մատենադարանին եւ Հայոց Պատրիարքութեան:

Լիզպոնի ցուցահանդէսը բաց պիտի մնայ մինչեւ սեպտեմբերի 22-ը, Հիմնարկի կեդրոնատեղիի Արեւստի գրադարանի ատրիումին մէջ: